ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄՈՐ ՎԱՐԴԱՐԱՆԻ ԱՂՈԹՔԸ՝

ԸՆԴԴԵՄ ՄԵՂՔԻ ԵՎ ԱՂԱՆԴՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ -2023

Աղոթք 10 Ողջույն քեզ Մարիամ
մտածելով 3-ի խորհրդի վրա
Հայտնել չորրորդ խորհուրդը
եւ աղոթել մի Հայր մեր
Հայտնել երրորդ խորհուրդը
եւ աղոթել մի Հայր մեր
ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՈՒՐԴ
1 Փառք Հօր
1 Փառք Հօր
ՉՈՐՐՈՐԴ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՐԵՔՈՐԴ ԽՈՐՀՈՒՐԴ
Աղոթք 10 Ողջույն քեզ Մարիամ
մտածելով 4-ի խորհրդի վրա
Աղոթք 10 Ողջույն քեզ Մարիամ
մտածելով 2-ի խորհրդի վրա
1 Փառք Հօր
1 Փառք Հօր
Հայտնել հինգերորդ խորհուրդը
եւ աղոթել մի Հայր մեր
Հայտնել երկրորդը խորհուրդը
եւ աղոթել մի Հայր մեր
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՈՒՐԴ
1 Փառք Հօր
ՍՈՒՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ
Աղոթք 10 Ողջույն քեզ Մարիամ
մտածելով 5-ի խորհրդի վրա
Աղոթք 10 Ողջույն քեզ Մարիամ
մտածելով 1-ի խորհրդի վրա
Հայտնել առաջի խորհուրդը
եւ աղոթել մի Հայր մեր
1 Փառք Հօր
Աղոթք 3 Ողջույն քեզ Մարիամ
հաւատ, հույս եւ սէր խնդրելով
Աղոթել մի Հայր մեր
† Խաչակնքել եւ
առել Հոգեստակը

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ

Սուրբ Վարդարանի այս աղոթագրքույկը նվիրվում է՝ ի պատիվ մեր Ամենօրհնյալ Սուրբ Տիրամոր, ով Վարդարանի Թագուհին է և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու քահանայապետ՝ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս, հայ ժողովրդի սիրելի Ն.Ս.Օ. Տ.Տ. Վազգեն Առաջին Վեհափառի հիշատակին (աղոթենք նաև նրա սրբադասման համար)*: Այս աղոթագրքույկը մեծ սիրով և Տիրոջը խոստանալով որոշեցի հանձնել տպագրության ահա թե ինչու, և թե ինչ առաջադրանք տվեց ինձ Բարձրյալն*

արդեն երրորդ անգամ՝ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ միջոցով, 2021թ. ապրիլի 28-ին:

Այս հույժ կարևոր վկայությունս ցանկանում եմ կիսվել ընթերցողի և սիրով աղոթողի հետ:

Նախ սկսեմ նրանից, որ 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ, մի օր, Երևանում, կիրակնօրյա Պատարագից հետո, հանկարծ ցանկություն առաջացավ գնալ սուրբ Էջմիածին և խնդրել Սուրբ Աստվածածնի և Վազգեն Առաջինի բարեխոսությունը հայ ժողովրդի համար: Երբ տեղ հասա, ծաղիկներ գնեցի և մի փունջը տարա Սուրբ Աստվածածին եկեղեցի ու դրեցի Իր սրբապատկերի մոտ գտնվող ծաղկամանի մեջ, մյուս փունջն էլ բերեցի և դրեցի Մայր Տաճարին կից այգում կանգնեցված Վազգեն Վեհափառի հուշարձանի առջև: Անցավ հինգ օր: Հանկարծ ուրբաթ օրը ներքին մեծ մղում եղավ միանալու մի կնոջ հետ, ով ուզում էր ոտքով ուխտի գնալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, և մի քանի օր առաջ ինձ ասել էր, և ես էլ ուզեցի միանալ: Եվ

ահա ծոմ պահած՝ երկու ուխտավոր, ճանապարհի բոլոր եկեղեցիները մտնել, մոմ վառելով ու աղոթքով, երեկոյան ժամը յոթին հասանք Ք. ԷՋՄԻԱԾԻՆ. որտեղ սուրբ Հռիփսիմեն վերջին բաց եկեղեցին էր, որ մըտանք: Իսկ երբ մոտեցանք մտնելու սուրբ Շողակաթ եկեղեցի, արդեն փակ էր, և մի կին կանգնած էր դռների դիմաց: Նա ասաց, որ Արցախից է եկել, ապա միասին աղոթեցինք, «Տեր Ողորմեա» -ն երգեցինք, և երբ իմացավ, որ ուխտավոր ենք ու գնում ենք Մայր Տաճար, քանի որ տեղը չգիտեր և ուզում էր գալ, սիրով մեզ միացավ: Երբ պիտի արդեն մտնեինք Տաճարի բակ, խնդրեցի, որ նախ գնանք այգի՝ Վազգեն Վեհափառի հուշարձանի

մոտ: Ու քանի որ արդեն մթնշաղին մոտեցանք, հազիվ տեսա ու հասկացա, որ ոտքերի մոտ դեռ հինգ օր առաջ դրածս ծաղիկներն էին, ու ապշահար եղա, քանի որ այնքան թարմ էին մնացել, որ կարծես այդ պահին դրած լինեի: Աստվածային հրաշք էր, որ բացահայտում էր Վեհափառի սրբության մասին...:

Դրան հաջորդեց մյուս դեպքը: Պատերազմից անմիջապես հետո՝ նոյեմբերի կեսերին, մի օր, երբ տուն մտա, Աստծո Սուրբ Հոգու մղումով հանկարծ շատ մեծ սեր զգացի Սուրբ Աստվածածնի սիրելի աղոթքը՝ Վարդարանն աղոթելու (նշեմ, որ Սուրբ Տիրամոր նկատմամբ մեծ սիրո փափագ էր առաջացել այն օրվանից, երբ նախորդ տարվա՝ 2019թ. ամռան մի գիշեր, երբ քնած էի, Սուրբ Կույսը եկավ և Իր նուրբ ու բարակ, երկարավուն, քնքուշ մատներով, մորս նման կամացուկ և մեծ սիրով ու հոգատարությամբ, վերմակով ծածկեց բաց մնացած ուսս...):

Եվ ահա ամեն ինչ թողած՝ ծնկեցի Վարդարանի աղոթքի, որ երբևիցե ամ-

բողջությամբ՝ Ավետարանի տվյալ թեմա-
յի լրիվ ընթերցմամբ, ոչ մի անգամ չէի
աղոթել, երբեմն եղել էր, այդ տարվա մեջ
մի քանի անգամ մեկ տասնյակն էի աղո-
թել, թեև ունեի աղոթագիրք էլ, Վարդա-
րանի համրիչ էլ: Եվ Տերը մղեց, որ բո-
լորին սկսեմ ասել, որ նույնպես Վարդա-
րան աղոթեն, քանզի Սուրբ Տիրամայրն
ասել է, որ այն դեմ է մեղքին և հե-
րետիկոսությանը՝ դեռևս 12-րդ դարում:
Բայց, քանի որ Հայաստանյայց Առաքե-
լական Եկեղեցին Վարդարան չի աղո-
թում, աղոթագիրք էլ չկա, շատերը նույ-
նիսկ տեղյակ էլ չեն, թե ինչ է, համրիչը
շատերը վզնոցի տեղ են օգտագործում,
մի քանիսն էլ կախում են մեքենայի մեջ
և այլն, դա ինձ որոշ չափով ետ պահեց,
որ համացանցում գրեի, ու բանավոր էի
ասում մարդկանց: Այդպես աստվածային
մղումը քիչ-քիչ թուլացավ՝ չնայած
աղոթքը ամեն օր ես անում էի արդեն:
Բայց Հանկարծ, 2021թ. ապրիլի 27-ին (ի
դեպ 1749թ. ապրիլի 27-ին ի Տեր ննջեց
Մխիթար վրդ. Սեբաստացին, և նրա բա-

բեխոսությունը նույնպես կա այս սուրբ գործի մեջ) նորից ուժգին մղում ունեցա Տիրոջից, մի աստվածային Ներշնչանք, որ բարձրաձայնեմ սուրբ Վարդարանի մասին, բայց էլի կամուկացի մեջ էի, չգիտեի՝ ինչպես վարվել և Աստծուց օգնություն էի հայցում: Եվ ահա այդ գիշերը՝ ապրիլի լույս 28-ին, երազ-տեսիլք տեսա շատ իրական, և 3-րդ անգամ Տերը Վազգեն Վեհափառի միջոցով հասկացրեց և տվեց առաջադրանքը: Իսկ մինչ այդ, հայոց Հայրապետի բարեխոսությամբ մի հրաշք էլ եղավ ինձ հետ: Ապրիլի 8-ին, թե 9-ին էր, հստակ չեմ հիշում, երբ մրսել էի ու ջերմության մեջ հիվանդ պառկած էի, մտածում էի, որ չեմ կարողանա Տերունական կիրակի օրը գնալ սուրբ Պատարագի, եթե այսպես շարունակվի: Ու այդ պահին ձեռքիս հեռախոսով համացանցում տեսա, որ մի քահանա իր և Վեհափառի հետ միասին անցյալի նկար էր տեղադրել: Նայելով այդ նկարին՝ ողբագին լաց եղա և աղաչեցի իմ սիրելի Վազգեն Առաջինին, որ

նա բարեխոսի Տեր Հիսուսին, որ հրաշք կատարվի, որ առողջանամ ու կարողանամ գնալ սուրբ Պատարագի՝ Հաղորդվելու և ճաշակելու Տեր Հիսուսի Մարմինն ու Արյունը: Եվ հանկարծ մի թմրություն, քուն եկավ աչքերիս, ու երբ արթնացա, ամբողջովին քրտնած էի, բայց հրաշքով լրիվ բժշկված, և վեր կացա անկողնուց միանգամայն առողջ: Փա՛ռք Աստծուն, այնքան շնորհակալ եմ, և օրհնյալ լինի մեր սիրելի Կաթողիկոսը ինձ համար Տիրոջը արված իր բարեխոսության համար: Իսկ օրեր անց, ապրիլի 28-ի գիշերը այսպիսին եղավ Աստծո առաջադրանքը նրա միջոցով:

Տեսա, որ մտա մի լուսավոր աշխատասենյակ, որ նման էր լսարանի, սեղաններ կային, և մի քանի երիտասարդ տղաներ, մոտ ութ հոգի, որ ամեն մեկը լուռ ինչ որ գործ էր անում, իսկ ես՝ իբրև նոր աշխատող էի, ու մոտեցա մի ազատ սեղանի մոտ ու կանգնեցի: Այդ պահին իմ դիմացից՝ ձախ կողմի դռնից շատ հանդիսավոր ներս մտավ Վազգեն Վեհա-

փառը այ այս նկարի տեսքով՝ ալեհեր, սպիտակ հանդերձանքով: Եվ հետաքրքիր էր, որ աշխատասենյակում պատի միջնորմ չկար, բայց հստակ զգացվում էր, որ նրա կողմը ու իմ կանգնած կողմը կարծես տարանջատված էր: Ահա նա իր կողմով առաջ եկավ ու նրստեց աթոռին:



Ապա նայեց իմ կողմում կանգնած մի տղայի և հայացքով ինչ որ բան հասկացրեց: Ասեմ, որ խոսքեր չէին հնչում, ամեն ինչ մտքով էր հասկացվում: Այնուհետև այդ աշխատող երիտասարդը ինձ տվեց մի քառակուսի սպիտակ մաքուր կտավ, որի վրա, երբ դիմացից նայեցի, ներքևի ձախ անկյունում մի մեծ պատռված անցք էր բացված, իսկ կտավի վերևի մասերում մի քանի մաշված տեղեր կային, որ կարող

էին ծակվել շուտով: Այդ պահին Վեհափառը նայեց աչքերիս մեջ, և հասկացա, որ այդ անցքը պետք է կարեմ ու կպցնեմ: Եվ հենց այդ նույն վայրկյանին, վերցրեցի թել ու ասեղը... Երբ դա տեսավ Հայոց Կաթողիկոսը, մի գոհունակ ժպիտով նայեց ինձ ու վեր կացավ աթոռից և հեռացավ այդ նույն դռնով:

Հաջորդ օրը, երբ արթնացա, մտածում էի, թե այդ ինչ հանձնարարություն ինձ տրվեց: Ու երբ սկսեցի Վարդարան աղոթել, այդ պահին ներշնչվելով, հասկացա, որ սա 3-րդ անգամն էր, որ պիտի Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներիս նաև ասեմ ու սովորեցնեմ Աստվածամոր սիրելի «սաղմոսարանի»՝ Վարդարանի աղոթքը՝ ընդդեմ մեղքի և աղանդների, և հանկարծ իմ մեջ հնչեցին մեր սուրբ Աստվածածնի այս խոսքերը՝ ասված երանելի Մարիա Վալտորտային՝ ծակված (պատռված) հոգևոր ցանցի կարվելու մասին. «...Եվ եթե ձեր քահանաները կույր են, խուլ են, նրանց հոգիները կաթվածահար են, իսկ մտքերը՝ անտրա-

մաբանված, եթե նույնիսկ նրանք խրված են մեղքերի մեջ ու բորոտված, ինչը հարիր չէ նրանց առաքելությանը, եթե նրանք սառն են ու անտարբեր՝ որպես մեռյալները գերեզմանում, ուստի կանչե՛ք Աստծուն, Տեր Հիսուսին, որպեսզի առողջացնի և կենդանացնի նրանց:

Հոգին փրկել, նշանակում է նրա համար տեղ ապահովել Երկնքում: Իսկ քահանայի հոգին փրկել, նշանակում է փրկել շատ հոգիներ, որովհետև յուրաքանչյուր սուրբ հովիվ մի ցանց է, որով հոգիներ է որսվում Աստծո համար: Քահանային աղոթքով փրկել, նշանակում է լուսավորել, վերականգնել և ստեղծել այդ միստիկ ուռկանի ցանցը»:

Այդ օրվանից սկսեցի տեղադրել Վարդարանի աղոթքը՝ աղոթելով նաև մեր հայ հոգևորականների համար, ինչպես որ 1961-65թթ. Իսպանիայի Սան Սեբաստիան դե Գարաբանդալի Իր երևումների ժամանակ Սուրբ Աստվածածինը չորս աղջիկ երեխաներից մեկին՝ Մարի-Լոլիին ասել էր. «Աղոթի՛ր Վարդարանով ամեն



օր: Աղոթիր քահանաների համար, քանի որ նրանց մեջ կան այնպիսիները, որոնց համար ամեն օր շատ զոհողություններ են պահանջվում»:

Ահա խնդրում եմ, որ դուք էլ միանաք, քանի որ ամեն սրբագործված քահանայի աղոթք, հազարավոր մարդկանց կարող է փրկել, և եթե նրանք շատանան, հայ ժողովրդի ապաշխարությունն էլ կլինի, պատերազմ էլ կկասեցվի: Եվ մի հատկանշական փաստ ավելացնեմ, որ 1571թ. հոկտեմբերի 7-ին Լեպանտոյի ճակատամարտում քրիստոնեական բանակը կանգնեցրեց Թուրքերի առաջխաղացումը դեպի Եվրոպա՝ սուրբ Վարդարանի աղոթքի զորությամբ և ազատագրեց 12000 գերիների: Եվ հենց այնպես չէ, որ Տերը հայ ժողովրդին նույնպես

մղում է աղոթելու սուրբ Վարդարանը սիրով, ոչ ստիպողաբար՝ հրավիրելով Սուրբ Տիրամորը մեզ հետ աղոթքի՝ կասեցնելու թշնամիների առաջխաղացումը մեր Հայոց սուրբ երկիր:

Աստված օրհնի բոլորին և Սուրբ Աստվածածնի ու Վազգեն Վեհափառի և Մխիթար Սեբաստացու բարեխոսական աղոթքներով առ մեր Տեր Հիսուս Քրիստոս, լինի հայ ժողովրդի նորօրյա մի վերածնունդ, հարություն, դարձի և ապաշխարության մի նոր շունչ: Եվ մեր Սուրբ Մոր ձեռքից ամուր բռնած՝ քայլենք դեպի Իր Միածին Որդին՝ դեպի մեր Փրկիչը, դեպի Աստված և Աստծո Որդի մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

Սիրով՝ Սոֆի Հակոբյան

«ՍԷՐ ՈՉ ԵՐԲԵ՛Ք ԱՆԿԱՆԻ»
(Վեհափառի տապանաքարի վրայի արձանագրությունը)

ՎԱՐԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Վարդարանը - դա, սուրբ Տիրամոր ամենասիրելի աղոթքն է, բազում շնորհ-ների բանալին, և ավանդության համա-ձայն՝ որպես Ավետարանը քարոզելու միջոց, և ժողովրդական աղոթք: Այն հիշատակություն է Հիսուս Քրիստոսի և Մարիամի կյանքի և ավետարանական դրվագների, ինչպես նաև բարեխոս-ության, փառաբանության և օրհնաբան-ության աղոթք:

Վարդարան նշանակում է «վարդերի պարտեզ»: Անվանումը ծագել է Սուրբ Աստվածամորը վարդեր նվիրելու հին սովորությունից. այս աղոթքը նմանեցվել է վարդերի մի փնջի, որ ամեն անգամ հավատացյալը նվիրում է Սուրբ Կույս-ին: Տիրամայրը տարբեր երևումների ըն-թացքում բազմիցս հայտնել է, որ յու-րաքանչյուր անգամ «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ» աղոթելով, Նրան ենք նվիրում մի գեղեցիկ Վարդ: Վարդը ծաղիկների թագուհին է, իսկ Վարդարանը՝ ջերմե-

ռանդությունների վարդը, հետևաբար՝ ամենագեղեցիկը, և ամեն «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ»-ի և «Հայր մեր»-ի համար դրված հատիկները՝ իբրև վարդեր, պսակաձև շարված են աղոթահամրիչի վրա, և աղոթքները ասելով՝ մենք վարդեր ենք նվիրում Տեր Հիսուսին և սուրբ Մարիամ Աստվածածնին:

Ահա այսպես «Վարդարան» բառի՝ որպես վարդերի պսակ, բացատրության առաջին սահմանումը, տվել է Մխիթար Սեբաստացին:

Վարդարանները (աղոթահամրիչները) լինում են տարբեր չափի ու գույնի և պատրաստվում են տարբեր նյութերից՝ փայտից, պլաստմասսայից, ապակուց, կորիզներից և նույնիսկ, թանկագին քարերից:

Սուրբ Վարդարանը համարվում է կարելագործված աղոթք, որովհետև

նրանում նկարագրված է մեր փրկության ուղին: Կարծեք համառոտ Ավետարան լինի, որովհետև Վարդարանը աղոթելով՝ իրականում մենք մտաբերում են Տեր Հիսուսի և Մարիամի կյանքի բերկրալի, վշտալի, լուսափայլ և փառավորյալ պահերը: Պարզ աղոթք է՝ Մարիամի նման համեստ: Մի աղոթք է, որտեղ Տիրամորը հրավիրում ենք մեզ հետ աղոթելու: Մեր Երկնավոր Մայրը, ինչպես բոլոր մայրերը, մեզ միշտ շնորհում է մեր խնդրանքները: Ու երբ Նա իր աղոթքներով միանում է մեր աղոթքներին և առաջնորդում, ուստի դրանք դառնում են ավելի իրականանալի, քանզի երբ Մարիամը խնդրում է, միշտ ստանում է. չէ՞ որ Հիսուս երբեք ոչինչ չի մերժում Իր Մորը, ինչպես որ դա Տերը փաստեց Կանայի հարսանիքի ժամանակ, և այդ օրինակը մեզ տրվեց դարերով, որպեսզի հասկանանք Սուրբ Աստվածամոր բարեխոսության մեծազոր արժեքը:

Ավելի լավ է Սուրբ Վարդարանից մեկ տասնյակ աղոթել դանդաղ և կենտրո-

նացած կերպով, քան թե հինգ տասնյակ աղոթել արագ և մեխանիկորեն:

Տարբեր թվականներին Իր երևումների ընթացքում Երկնային մեր Սուրբ Մայրը՝ Վարդարանի Թագուհին հրավիրել է բոլորին աղոթելու սուրբ Վարդարանը՝ որպես հզորագույն զենք Սատանայի դեմ՝ բացելով մեր առջև խաղաղության ուղին, իսկ այն աղոթելիս՝ ոչ միայն մեծ ջերմեռանդություն է առաջանում, այլև, ինչպես Սուրբ Մայրն է ասել դեռ 12-13-րդ դարերում, այն դեմ է աղանդներին և մեղքին: Առաջին անգամ Տիրամայրն է Վարդարանը տվել սուրբ Դոմինիկոսին:

Դոմինգո դե Գուզմանը՝ իսպանացի քարոզիչը, եկել էր հարավային Ֆրանսիա՝ պայքարելու արագորեն տարածվող աղբակյան հերետիկոսության դեմ: 1208 թվականն էր, Դոմինիկոսը ծնրադիր՝ հուսահատ աղոթում էր Պրուի մատուռում: Հանկարծ Աստվածամայրը երևում է նրան ու տալիս է Վարդարանը՝ հանձնարարելով սովորեցնել այդ աղոթքը բո-

լոր մարդկանց՝ որպես վահան աղանդավորության և մեղքի դեմ:

Թեպետ հատիկներով աղոթքները վաղուց տարածված էին, միաբանության անդամները արագորեն որդեգրում են աղոթքի այդ նոր ձևը Եվրոպայի անուս քրիստոնյաներին՝ Վարդարանի խորհուրդները սովորեցնելու համար:

Քսան խորհուրդների (4 խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է 5 դրվագ) շուրջ մտածականը ծառայում է Հիսուսի և Մարիամի կյանքի ամենակարևոր դրվագները, դեպքերը վերհիշելուն: Տասնութ խորհուրդները Նոր Կտակարանից են, մեկը՝ Տիրամոր Վերափոխումը, բարի ավանդույթից, իսկ Սուրբ Տիրամոր Թագադրումը՝ Հայտնության գրքից: Լուսափայլ խորհուրդները ավելացվել են 2002թ. Հռոմի սուրբ Հովհաննես Պողոս Բ Պապի նախաձեռնությամբ, ով իր գրության մեջ ասում է. «Վարդարանի միջոցով հավատացյալները ստանում են առատ Շնորհներ անմիջապես Փրկչի Մոր ձեռքերից»:

ԲԵՐԿՐԱԼԻ խորհուրդներն են. Հրեշտակի Ավետումը Մարիամին, Մարիամի այցելությունը Եղիսաբեթին, Հիսուսի Ծնունդը, Հիսուսի Ընծայումը տաճարին և Երուսաղեմի տաճարում Հիսուսի գտնվելը:

ԼՈՒՍԱՓԱՅԼ խորհուրդներն են. Հիսուսի Մկրտությունը, Կանայի հարսանիքը, Հիսուսի ազդարարումը Աստծո Թագավորության գալուստի մասին, Հիսուսի Պայծառակերպությունը և Սբ. Հաղորդության հաստատումը:

ՎՇՏԱԼԻ խորհուրդներն են. Հիսուսի՝ արյուն քրտնելը Գեթսեմանիի պարտեզում, խարազանումը, Հիսուսի թագադրումը փշե պսակով, Խաչի ճանապարհը և Խաչելությունը:

ՓԱՌԱՎՈՐՅԱԼ խորհուրդներն են. Հիսուսի Հարությունը, Համբարձումը, Հոգեգալուստը, Աստվածամոր Վերափոխումը և Թագադրումը՝ որպես երկնքի և երկրի Թագուհի:

Ժամանակի ընթացքում Վարդարանին հետզհետե ավելացվել են աղոթքներ և

շարականներ: Այդ բոլորի գագաթնակետը պսակվում է Պորտուգալիայի Ֆաթիմայում՝ 1917թ., երբ Տիրամայրը, երեք փոքր երեխաներին ներկայանալով որպես Վարդարանի Տիրուհի, նոր աղոթքներ է սովորեցնում՝ պատգամելով ամեն օր աղոթելու Վարդարանը: Այդ երեխաներից քույր Լուչիան, որն ապրեց երկար տարիներ, ասում էր. «Չկա մի խնդիր, ինչքան էլ բարդ լինի, նյութական կամ հոգևոր, մեր անձնական կամ ընտանեկան կյանքում, որ հնարավոր չլինի լուծել Վարդարանի աղոթքով»: Նաև մի կարևոր փաստ ևս. Սատանան մի էկզորցիզմի (դիվահալածության) *ժամանակ այսպես է ասել հայր Գաբրիել Ամորֆին. «Վարդարանի ամեն մեկ հատիկի վրա արված «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ»-ը մեկ հարված է իմ գլխին: Եթե քրիստոնյաները իմանային Վարդարանի աղոթքի զորության մասին, իմ վերջը կգար»:*

Սուրբ Դոմինիկոսից հետո երանելի Ալան դե Լա Ռոշին, որին նույնպես երևացել էր Տիրամայրը, հայտնում է

Վարդարանի 15 խոստումները (գրության վերջում). անշուշտ, խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր անկեղծ և ջերմեռանդորեն աղոթում են:

Դարերի ընթացքում Աստվածամայրը տարբեր երևումների ժամանակ միշտ կրկնել է, որ այդ պարզ ու կրկնվող գեղեցիկ աղոթքը՝ Վարդարանը, Իր սիրելի աղոթքն է: 1884թ. Նեապոլում Նա երևում է Պոմպեի Սուրբ Վարդարանի Տիրամոր պատկերով, երիտասարդ Ֆորտունա Ագրելլիին, որը տառապում էր ծանր հիվանդություններից: Աստվածամայրը հայտնում է, որ «Սուրբ Վարդարանի Թագուհի» տիտղոսը Իր ամենասիրելին է: Երկնավոր Մոր բարեխոսությամբ Ֆորտունան հրաշքով լրիվ բժշկվում է՝ Վարդարանի 54 օրյա աղոթք ասելով՝ 27 օրերը՝ խնդրանքով և 27 օրերը՝ շնորհակալությամբ:

Լուրդում՝ 1858թ. Տիրամայրը Բեռնադեթին քանի՛ անգամ ստիպել է Վարդարան աղոթել: Փոքր աղջիկը, տեսնելով գեղեցիկ Տիկնոջը, անմիջապես ծնրա-

դրել էր ու սկսել աղոթել Վարդարանը: Տիկինն, ի դեպ, նույնպես Վարդարան ուներ և Բեռնադեթի աղոթքի հետ սահեցնում էր հատիկները:

1982թ. Ռուանդայում Սուրբ Տիրամայրը Իր երևումներից մեկի ժամանակ Մարի-Կլերի միջոցով ասել է. «Խորհրդածեք Տիրոջ չարչարանքների և Նրա Մոր խոր վշտի մասին: Աղոթեք Վարդարանը, հատկապես Վշտալի խորհուրդները, որպեսզի զղջման շնորհ ստանաք»:

Հայոց մեջ առաջին անգամ Վարդարանի աղոթքի մասին կարդում ենք Մխիթար Սեբաստացի Աբբահոր կենսագրության մեջ. «Երկու ճգնավոր եղբայրները (Հովհաննեսը և Ալեքսիանոսը, որոնք Վանի Լիմ անապատի ճգնարանից եկել էին Սեբաստիա), այս աշխարհից մեկնեցին բարեպաշտ հավատացյալներին թողնելով ամեն օր Սուրբ Վարդարանի հրեշտակային ողջույններով աղոթելու գեղեցիկ սովորությունը, որն առաջին անգամ իրենք ներմուծեցին Սեբաստիա, որ այնտեղից տարածվեց ուրիշ

քաղաքներում ևս»: Վարդարանի տարածման հիմնական ալիքը սկսվել է Մխիթարյան Միաբանության հայրերի, հատկապես, Մխիթար Սեբաստացու ջանքերով: Սեբաստացին մեծագույն հայ մարիամասերներից է, ով հայկական մշակույթի մեջ ամրացրել է Վարդարանի աղոթքը և այլ մարիամական աղոթքներ:

Հայոց աշխարհում Վարդարանի աղոթքը մեծ տարածում է գտել 1692թ.-ից Մխիթար Սեբաստացու միջոցով: Նա Սևանավանքում՝ Տիրամոր նկարի առաջ ծնկած, որ սույն գրքույկի առաջին էջում է, խնդրում էր ջերմեռանդություն աղոթքի մեջ, որ չէր գտնում, և երբ արտասվելով է խնդրում, թմրություն է իջնում նրա վրա ու տեսիլքում երևում է Սուրբ Կույսը՝ ծաղկանկար զգեստով՝ երկու կույսերի ընկերակցությամբ, և տալիս նրան՝ Իր «ԵՂԻՑԻ»-ն: Այդ պահին նաև բժշկվում են Մխիթարի աչքերը:

Հետագայում նա հիմնադրում է Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան Միաբանությունը, և արդեն 1735թ. Վար-

դարանը Սուրբ Գրքից ու Նարեկից հետո հայ աշխարհում ամենաշատ տպագրվող աղոթքն է դառնում:

Ի դեպ Նարեկացու «Մատյան Ողբերգությունը» նույնպես Տեր Հիսուսի թելադրածն է, որ 2018թ. «Լույսի Կաթիլներ» Պատգամագրքի օգոստոսի 16-ի Իր պատգամում փաստեց Տերը. «...դրանք Իմ զարդանախշված խոսքերն են, որ ամեն խոսքով դուք ևս միավորվեք և Ինձ հասցնեք ձեր սրտի անկեղծությունը, սրբությունը...»:

Վարդարանը շատ սիրված է եղել հատկապես Սեբաստիայի հայ ընտանիքներում, իսկ Նախիջևանի Սուրբ Կաթողիկե տաճարի Ավագ խորանը 1735 - 40 թթ. զարդարել է «Սուրբ Վարդարանի Տիրամայրը» կոչվող յուղապատկերը: Վայրկյանները, որոնք պիտի անցկացնենք սուրբ Մարիամի հետ, մեզ կհրավիրեն խոկալու և հիանալու մեր Տեր Հիսուսի անձով: Նույնիսկ առօրյա հոգսերի մեջ Նրանք կսնուցեն մեր սրտերը վստահությամբ և հանձնառումով:

ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄՈՐ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԱՄՆՀԻՆԳ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

1. Նրանք, ովքեր Վարդարանն աղոթելով ինձ հավատարմորեն ծառայում են, կարժանանան հատուկ շնորհների:

2. Ես խոստանում եմ իմ հատուկ պաշտպանությունը և մեծագույն շնորհները բոլոր նրանց, ովքեր նվիրվածությամբ աղոթում են իմ «Սաղմոսարանը»:

3. Վարդարանը հզոր զրահ կլինի դժոխքի դեմ: Կքայքայի մոլությունները, կնվազեցնի մեղքը և կհաղթի անհավատությանը:

4. Վարդարանը կբերի առաքինության և բարի գործերի ծաղկման. այն կստանա հոգիների համար Աստծո առատ Ողորմությունը. այն մարդկանց սրտերին կտիրի և աշխարհն ու նրա ունայնությունների սիրո ցանկությունը կփոխարինի հավիտենական կյանքին ձգտելու ցանկությամբ: Ա՜խ, միայն թե հոգիները

իրենք իրենց սրբացնեն այս մտածական-ներով, բազմաթիվ հոգիներ կսրբադաս-վեն:

5. Նրանք, ովքեր Վարդարանի միջո-ցով գան Իմ հովանու ներքո, երբեք չեն կործանվի:

6. Նրանք, ովքեր ջերմեռանդորեն աղոթեն Վարդարանը՝ խորհրդածելով յուրաքանչյուր խորհուրդի շուրջ, փոր-ձանքների չեն ենթարկվի, չեն կրի Տեր Աստծո պատիժը, հանկարծամահ չեն լի-նի: Եթե մեղավոր է, պետք է դարձի գա, եթե շնորհի է արժանացել, ապա պետք է հարատևել և արժանի լինել հավիտենա-կան կյանքին:

7. Հավատարիմ և նվիրյալ ծառաները, առանց Եկեղեցու վերջին օծման և սուրբ խորհուրդների, չեն մեռնի:

8. Իմ ցանկությունն է, որ նրանք, ովքեր աղոթում են Վարդարանը, կյանքի և մահվան ընթացքում արժանանան լույ-սի և շնորհների լիության և կյանքի ու մահվան ընթացքում մասնակցեն սրբերի արժանիքներին:

9. Ամեն օր քավարանից ազատում եմ Իմ Վարդարանին նվիրված մարդկանց:

10. Իմ Վարդարանի իսկական ծառաները կվայելեն դրախտի փառքի անսահման երջանկությունը:

11. Ինչ որ խնդրեք Վարդարանի միջոցով, կստանաք:

12. Բոլոր նրանց, ովքեր կտարածեն Իմ Վարդարանը, կօժանդակեմ անհրաժեշտ բոլոր դեպքերում:

13. Ես ստացել եմ Իմ Աստվածային Որդուց այն, որ Իմ Վարդարանի բոլոր պաշտպանները կյանքի և մահվան ընթացքում երանելի կլինեն:

14. Բոլոր նրանք, ովքեր Իմ Վարդարանն են աղոթում, Իմ սիրելի որդիներն ու դուստրերն են՝ եղբայրներն ու քույրերը Իմ Միածին Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի:

15. Իմ Վարդարանին նվիրվածությունը նախասահմանվածության մեծ նշան է:

Թո՛ղ Վարդարանի աղոթք-հատիկների շարանը մեզ համար լինի մեր հոգևոր

կյանքի ամենօրյա իրական սանդուղքը, որով բարձրանանք դեպի մեր երկնավոր Մոր՝ Սուրբ Վարդարանի Թագուհու գիրկը: Գոհացնենք Տեր Հիսուսին՝ անշտապ աղոթելով Սուրբ Վարդարանը: Ամեն աղոթք պետք է սրտից բխի, որ զգանք մեր ասածը՝ մտորելով յուրաքանչյուր խորհրդի վրա, զգանք այդ խորհուրդ-ները հոգով ու սրտով և դրանց նայենք Սուրբ Մոր Աչքերով....:

ԻՆՉՊԵ՞Ս ԱՂՈԹԵԼ ՎԱՐԴԱՐԱՆԸ

Պատրաստվում ենք աղոթելու Վարդարանը (կարելի է նշել աղոթքի հատուկ ինչ-որ նպատակ): *Ընտրում ենք Վարդարանի խորհուրդներից մեկը. հիմնականում ըստ շաբաթվա տվյալ օրվա:*

Վարդարանի խորհուրդներն են՝

† ԲԵՐԿՐԱԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(Երկուշաբթի և Շաբաթ)

1. *Հրեշտակի ավետումը Մարիամին*
2. *Մարիամի այցը Եղիսաբեթին*
3. *Հիսուսի Ծնունդը*
4. *Հիսուսի Ընծայումը Տաճարին*
5. *Հիսուսին գտնելը Տաճարում*

† ԼՈՒՍԱՓԱՅԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(Հինգշաբթի)

1. *Հիսուսի Մկրտությունը Հորդանան գետում,*

2. Հիսուս Իր Նշանն է տալիս Կանայում,

3. Հիսուսն Աստծո Արքայության գալուստն է ազդարարում՝ կոչ անելով դարձի գալ,

4. Հիսուսի Պայծառակերպությունը,

5. Հիսուսը հաստատում է Սուրբ Հաղորդությունը:

† ՎՇՏԱԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(Հորեքշաբթի և Ուրբաթ)

1. Հիսուսի Տառապանքը Գեթսեմանիի պարտեզում,

2. Հիսուսի խարազանումը,

3. Հիսուսին թաղադրում են փշե պսակով,

4. Հիսուսն Իր Խաչը կրում է դեպի Գողգոթա,

5. Հիսուս խաչվում է և խաչի վրա մեռնում:

† ՓԱՌԱՎՈՐՅԱԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(Երեքշաբթի և Կիրակի)

1. Հիսուսի Հարությունը,

2. Հիսուսի Համբարձումը,

3. Սուրբ Հոգու Իջնելը՝ Հոգեգալուստ՝ Պենտեկոստե,

4. Աստվածամոր Վերափոխումը,

5. Կույս Մարիամի Թագադրումը երկընքում:

Վարդարանը հետևյալ կերպ ենք ասում.

† Հայտարարել խորհուրդը, որի վրա պիտի խորհրդածենք,

† Հուշակել Աստծո Խոսքը,

† Մի քանի վայրկյան մտածական,

† «Հայր մեր», 10 «Ողջույն» և «Փառք Հորը...»,

† Կարճ և ամփոփող աղոթք:

Հինգ խորհուրդներից հետո ասվում է «Ողջ լեր, Թագուհի» (Salve Regina) Ողջու՛յն Քեզ, սուրբ Թագուհի) աղոթքը և ապա կատարվում է Տիրամոր Գովերգը (Litania) և կամ Շարականներից և Հայրերից քաղված Տիրամորը նվիրված գովերգներ:

Տեր Հիսուսին հրավիրելով մեր սըր-

տերի մեջ՝ Նրանից հայցենք, որ մեր հոգին միացնի Իր Սուրբ Հոգուն՝ այս կերպ մեզ կարողություն ընձեռելով իսկապես սրտաբուխ աղոթելու: Ապա սկսում ենք աղոթքը խաչակնքելով և ասելով.

Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու: Ամեն:

Մկրտության պահին Խաչի նշանը՝ Աստծո զորության և ուժի Զենքը, դրոշմվում է մեր ճակատին: Այս նշանով ենք սկսում բոլոր աղոթքները, այսինքն՝ Աստծո հետ խոսակցությունը: Խաչի նշանը քրիստոնեական հավատքի խորհրդանիշն է, որովհետև հիշեցնում է Ամենասուրբ Երրորդությունը, որը հավատքի գլխավոր խորհուրդներից է:

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին հորդորում է մեզ. «Զամաչե՛նք Խաչյալին խոստովանելուց: Խաչակնքում ենք առանց երկմտելու, բոլոր պարագաներում. ուտելուց և խմելուց, տուն մտնելուց և դուրս գալուց, քնելուց առաջ, պառկելուց կամ վեր կենալուց: Սա մեծ պահապան է. աղքատներին՝ ձրի, տկար-

ներին՝ հեշտ, որովհետև այդ շնորհքը Աստծուց է գալիս»:

(Կոչումն Ընծայության, ԺԴ):

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

Ո՛վ Երկնավոր Արքա, Պաշտպան, Ճշմարտության Հոգի, որ ամենուր ես և ամեն ինչում:

Գանձ պարզ սրտերի և Պարգևիչ կյանքի:

Ե՛կ և Վրանդ հաստատիր մեր մեջ:

Մաքրի՛ր մեզ արատներից,

Եվ թող Սրբությունդ փրկի մեր հոգի-ները, ո՛վ Ամենասուրբ: Ամեն:

կամ՝

Ո՛վ Սուրբ Հոգի,

Իջի՛ր մեզ վրա՝ նորոգելով մեզ,

Լցրու՛ Քո Սիրով մեր հոգիները,

Հանգչի՛ր Դու մեր չարչարված հոգում՝

Տալով մեզ Խաղաղություն:

Ծածկի՛ր մեզ Քո Թևերով՝

Պատսպարելով ամենայն չարից,

Խոնարհեցրու՛ մեզ,
Առաջնորդի՛ր մեզ Քո Լույսով,
Որ կարողանանք տեսնել Քո բաղ-ձանքները,
Եվ այդպիսով իրագործել դրանք:
Ե՛կ, Սուրբ Հոգի,
Քո շատ սիրելի Հարսի՝
Սուրբ Մարիամի Անարատ Սրտի
Մեծազոր բարեխոսությամբ, ե՛կ:
Ամեն:

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆ

Վարդանի խաչը բռնած աղոթել.

ՀԱՎԱՏԱՄՔ-Ը.

(Նիկիական Հանգանակ, 325թ.)

(աշխարհաբար)

«Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը՝ երկնքի և երկրի, տեսանելիների և անտեսանելիների Արարչին:

Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն՝ ծնված Հայր Աստծուց, Միածին, այսինքն՝ Հոր Էությունից: Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, ճըշ-մարիտ Աստված՝ Աստծուց ճշմարտորեն ծնված և ոչ թե՝ արարած: Նույն Ինքը՝ Հոր բնությունից, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ երկնքում և երկրի վրա՝ երևացող և աներևույթ: Որ հանուն մեզ՝ մարդկանց ու մեր փրկության համար, իջավ երկնքից, մարմնացավ, մարդացավ, ծնվեց կատարելապես Սուրբ Կույս Մարիամից, որ հղացավ Սուրբ Հոգուց:

Որով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, որ կա մարդու մեջ՝ ճշմարտապես և ոչ կարծեցյալ, երևութական կերպով: Զարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը Հարություն առավ, նորացված մարմնով բարձրացավ երկինք, նստեց Հոր աջ կողմում: Գալու է նորացված Մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին և մահացածներին: Որի Թագավորությունը չունի վախճան:

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն՝ անեղին և կատարյալին, Ով խոսեց Օրենքի, մարգարեների և ավետարանների միջոցով: Որ իջավ Հորդանանի վրա, քարոզեց առաքյալների միջոցով և բնակվեց սրբերի մեջ:

Հավատում ենք նաև մեկ, Ընդհանրական և Առաքելական սուրբ Եկեղեցուն, մի մկրտությանը, ապաշխարությանը, մեղքերի քավությանը և թողությանը, մեռելների հարությանը, հոգիների և մարմինների հավիտենական Դատաստանին, Երկնքի Արքայության և հավիտենական Կյանքին: Ամեն»:

ՀԱՎԱՏԱՄՔ

(Նիկիական Հանգանակ, 325թ.)

(գրաբար)

«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ՝ յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ, Միածին՝ այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Զար-

չարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս: Որ էջն ի Հորդանան, քարոզեաց յառաքեալսն, եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ յառաքելական սուրբ եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս: Ամէն»:

Վարդարանի առաջին հատիկի հետ աղոթել.

«ՀԱՅՐ ՄԵՐ» *Տերունական աղոթքը.* (աշխարհաբար)

Հայր մեր, որ երկնքում ես.
Սուրբ թող լինի Քո անունը.
Քո արքայությունը թող գա,
Քո կամքը թող լինի երկրի վրա,
ինչպես որ երկնքում է:
Մեր հանապազօրյա հացը տու՛ր մեզ այսօր:
Եվ թո՛ղ մեզ մեր պարտքերը,
Ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին:
Եվ մի՛ տար մեզ փորձության,
այլ փրկի՛ր մեզ չարից:
Որովհետև Քոնն է արքայությունը
եվ զորությունը և փառքը,
հավիտյանս հավիտենից.
ամեն:

«ՀԱՅՐ ՄԵՐ» Տերունական աղոթքը.
(Գրաբար)

Հա՛յր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն Քո,
Եկեսցէ արքայութիւն Քո,
Եղիցին կամք Քո՝
Որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
տու՛ր մեզ այսօր,
Եվ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
Որպէս եւ մեք թողումք մերոց
պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ ի
փորձութիւն,
Այլ փրկեա զմեզ ի չարէն:
Զի Քո է արքայութիւն եւ
զօրութիւն եւ փառք,
յաւիտեանս.
ամէն:

Վարդարանի հաջորդ երեք հատիկների հետ աղոթել (առավել մեծ հավատ, հույս և սեր ունենալու համար)

«ՈՂՋՈՒ՛ՅՆ ՔԵԶ, ՄԱՐԻԱՄ»-Ը:

Աստծո հրեշտակը ավետեց Սուրբ Կույս Մարիամին և Նա հղացավ Սուրբ Հոգով:

(աշխարհաբար)

Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ,
Շնորհներով լի, Տերը Քեզ
հետ է:
Օրհնյալ ես Դու կանանց մեջ և
Օրհնյալ է Քո որովայնի պտուղ
Հիսուսը:
Սրբուհի՛ Մարիամ, Մա՛յր
Աստծո,
Բարեխոսի՛ր մեղավորներիս
համար,
Այժմ և մեր մահվան ժամին.
Ամեն:

«ՈՂՋՈՒ՛ՅՆ ՔԵԶ, ՄԱՐԻԱՄ»-Ը։
(ԴՐԱԲԱՐ)

Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ,
Լի շնորհօք, Տէր ընդ Քեզ։
Օրհնեա՛լ ես Դու ի կանայս,
Եւ օրհնեալ է պտուղ որովայնի
Քո Յիսուս։
Սրբուհի Մարիամ, Մա՛յր
Աստուծոյ,
Բարեխօսեա՛ վասն մեր
մեղաւորացս,
Այժմ եւ ի ժամու մահուան
մերոյ. Ամէն։

Ահավասիկ Տիրոջ
աղախինն եմ ես,
Քո ասածը թող լինի ինձ։
«Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...»։

Եվ Խոսքը Մարմին եղավ և
բնակվեց մեր մեջ։
«Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...»։

Վարդարանի հաջորդ առանձին հատիկի հետ աղոթել.

«ՓԱՌՔ ՀՈՐԸ...» (աշխարհաբար)

Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:
Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

(գրաբար)
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՄԻՔԱՅԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ

Սուրբ Միքայել Հրեշտակապե՛տ,
Կռվի օրը պաշտպանիր մեզ,
Եղիր մեզ պաշտպան՝ ընդդեմ չարի
և դևերի ծուղակների:
Թող Աստված սաստի նրանց,

Մենք խոնարհաբար աղոթում ենք, աղոթի՛ր և դու, ո՛վ իշխան երկնային զորաց,

Աստծո զորությամբ դժո՛խք նետիր Սատանային և մյուս բոլոր չար ոգիներին,

Որ սողոսկում են աշխարհ՝

Հոգիների կործանում փնտրելու համար. ամեն:

ԲԵՐԿՐԱԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

(Երկուշաբթի և շաբաթ)

1. ՀՐԵՇՏԱԿԻ ԱՎԵՏՈՒՄԸ ՄԱՐԻԱՄԻՆ

«Եվ վեցերորդ ամսին, Գաբրիել հրեշ-տակը, Աստծո կողմից ուղարկվելով Մարիամի տուն, մոտենալով՝ ասաց նրան. «Ողջու՛յն Քեզ, շնորհալի կույս, Տերը Քեզ հետ է»: Այս խոսքերի վրա Մա-րիամը վրդովվեց և մտքում խորհում էր, թե ինչ էր նշանակում այս ողջույնը: Հրեշտակը ասաց. «Մի՛ վախեցիր, Մա-րիա՛մ, որովհետև Աստծո առջև շնորհք գտար. ահա՛ դու կհղիանաս և կծնես մի Որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ պիտի լինի և Բարձրյալի Որդի պիտի կոչվի»: Մարիամն ասաց. «Ահավասիկ, Տիրոջ աղախինն եմ ես, թող խոսքիդ համաձայն լինի ինձ»:

(Ղուկաս 1. 26-38)

Խնդրում ենք սեր առ խոնարհություն:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փառք Հոր...»:

Ո՛վ իմ Հիսուս, ների՛ր մեզ մեր մեղ-երը, փրկի՛ր մեզ դժոխքի կրակից: Երկինք տար բոլոր հոգիներին, հատկա-

պես նրանց, ովքեր ամենից շատ Քո Ողորմության կարիքն ունեն: Ամեն: (1917թ. Ֆաթիմայում երևացած Տիրամոր հանձնարարած աղոթքն է):

Հիսու՛ս, իմ միակ Սեր, ես աղոթում եմ նրանց համար, ում Դու սիրում ես, որոնք սակայն չգիտեն՝ ինչպես պետք է Քեզ սիրեն: Թող նրանք սրբագործվեն և բժշկվեն, որ իրենք էլ ազատվեն ամենայն չարից: Ամեն:

Օգնի՛ր մեզ, ո՛վ Սուրբ Մայր, որ Քո օրինակով մենք էլ տրամադրվենք՝ միշտ Աստծո Կամքը կատարելու:

2. ՄԱՐԻԱՄԻ ԱՅՑԸ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ

«Մարիամը վեր կացավ և շտապով գնաց Հուդայի լեռնային շրջաններից մեկը: Մտնելով Զաքարիայի տուն՝ ողջունեց Եղիսաբեթին: Եվ երբ Եղիսաբեթը Մարիամի ողջույնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, և Եղիսաբեթը լցվեց Սուրբ Հոգով ու բարձրաձայն գոչեց. «Օրհնյա՛լ ես դու կանանց մեջ և օրհնյա՛լ է քո որովայնի պտուղը»:

(Ղուկաս 1, 39-56):

Խնդրում ենք սեր՝ դրացու, մերձավորի հանդեպ:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փառք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Մենք էլ, ո՛վ Մայր, ուզում ենք Քեզ նման խոնարհությամբ ծառայել դժվարության մեջ գտնվող մեր եղբայրներին և քույրերին:

3. ՀԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

«Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելավ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու: Հովսեփն էլ, Դավթի տնից և ազգատոհմից լինելով, Գալիլիայի Նազարեթ քաղաքից ելավ գնաց դեպի Հրեաստան՝ Դավթի քաղաքը, որը Բեթղեհեմ է կոչվում, մարդահամարի մեջ արձանագրվելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանված էր և հղի էր: Երբ այնտեղ հասան, Մարիամի ծննդաբերելու օրերը լրացան, և նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրով փաթաթեց նրան և դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանում նրանց համար տեղ չկար»: (Ղուկ. 2, 1-20):

Խնդրում ենք աղքատասիրություն:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Աղաչում ենք, ո՛վ Մայր, որ Քո միջնորդությամբ Հիսուս ամեն օր ծնվի մեր սրտերի մեջ:

4. ՀԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ
(Տեառնընդառաջ)

«Երբ նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսեսի Օրենքի համաձայն՝ Մանկանը Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքի մեջ. «Ամեն արու անդրանիկ զավակ Տիրոջը պիտի նվիրվի և Տիրոջ Օրենքում ասվածի համաձայն՝ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ ընծա պիտի տրվի»: (Ղուկ.2, 22:39):

Խնդրում ենք հնազանդության առաքինություն:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝ 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...»
և 1 «Փա՛ռք Հոր...»,
«Ո՛վ իմ Հիսուս...»,
«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Մենք էլ ենք փափագում, ո՛վ Մայր, Քեզ պես Հիսուսին նվիրել Իր Հորը մեր առօրյա կյանքի ու բոլոր գործերի հոգեշահ ընթացքը:

5. ՀԻՍՈՒՍԻՆ ԳՏՆԵԼԸ ՏԱՃԱՐՈՒՄ

«Երբ Հիսուսը տասներկու տարեկան դարձավ, տոնի սովորության համաձայն՝ Երուսաղեմ գնացին: Տոնական օրերը երբ անցան, ու մինչ նրանք վերադառնում էին, մանուկ Հիսուսը մնաց Երուսաղեմում, բայց ծնողները չգիտեին՝ կարծելով թե նա իրենց ուղեկիցների հետ է: Երեք օր հետո տաճարի մեջ գտան նրան, որ վարդապետների հետ նստած լսում էր նրանց և հարցեր էր տալիս, և բոլոր լսողները զարմանում էին նրա իմաստության և տված պատասխանների վրա» (Ղուկաս 2, 41-52):

Խնդրում ենք ողորմասիրություն:

Առանձին հատիկի հետ աղոթել՝ 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջո՛ւյն Քեզ, Մարիա՛մ...», 1 «Փա՛ռք Հոր...»: «Ո՛վ իմ Հիսուս...», «Հիսու՛ս, իմ միակ Սեր...»,

Օգնի՛ր մեզ, ո՛վ Մայր, որ չուշանանք Հիսուսին գտնելու, եթե պատահի, որ հանկարծ մեղքով կորցնենք Նրան:

Եզրափակել. «Ողջո՛ւյն Քեզ, սուրբ Թագուհի...» աղոթքով. (Տե՛ս՝ էջ 91-92):

ԼՈՒՍԱՓԱՅԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(Հինգշաբթի)

1.ՀԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՐԴԱՆԱՆ ԳԵՏՈՒՄ

«Այն օրերին, Հիսուս Գալիլիայի Նազարեթ քաղաքից եկավ և Հովհաննես Մկրտչից մկրտվեց Հորդանան գետի մեջ, որովհետև նրան, ով մեղքը չէր ճանաչել, Աստված մեզ համար մեղավոր արեց, որպեսզի մենք Նրանո՛վ փրկվենք: Ջրից դուրս ելնելու պահին տեսավ երկինքը պատռված, և Աստծո Հոգին՝ որպես աղավնի, իջնում էր իր վրա: Երկնքից մի

Զայն լսվեց, որ ասում էր. «Դո՛ւ ես Իմ սիրելի Որդին, որ ունես Իմ ամբողջ բարեհաճությունը» (Մարկոս 1. 9-11):

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:

Ո՛վ իմ Հիսուս, ների՛ր մեզ մեր մեղքերը, փրկի՛ր մեզ դժոխքի կրակից: Երկինք տար բոլոր հոգիներին, հատկապես նրանց, ովքեր ամենից շատ Քո Ողորմության կարիքն ունեն: Ամեն:

Հիսու՛ս, իմ միակ Սեր, ես աղոթում եմ նրանց համար, ում Դու սիրում ես, որոնք սակայն չգիտեն՝ ինչպես պետք է Քեզ սիրեն: Թող նրանք սրբագործվեն և բժշկվեն, որ իրենք էլ ազատվեն ամենայն չարից: Ամեն:

Օգնի՛ր մեզ, ո՛վ Մայր, որ միշտ հիշենք, թե մկրտությամբ մենք ևս Սուրբ Հոգին ենք ստացել:

2. ՀԻՍՈՒՄՆ ԻՐ ՆՇԱՆՆ Է ՏԱԼԻՍ ԿԱՆԱՅՈՒՄ

«Գալիլիայի Կանա քաղաքում հարսանիք կար. Հիսուսի մայրն էլ այնտեղ էր: Հրավիրված էին Հիսուսը և իր աշակերտները: Եվ երբ հարսանիքի ընթացքում գինին պակասեց, Մայրը Հիսուսին ասաց. «Գինի չունեն»: Մարիամը սպասավորներին ասաց. «Ինչ որ ձեզ ասի, արե՛ք»: Ապա Հիսուսը նրանց ասաց. «Լցրե՛ք այդ թակույկները ջրով...: Հիմա վերցրե՛ք ու տարե՛ք սեղանապետին»: Սեղանապետը ճաշակեց գինի դարձած ջուրը, առանց իմանալու, թե որտեղից էր: Հիսուս այս առաջին նշանն արեց՝ որպես հրաշքների սկիզբը, և նրանով հայտնեց իր փառքը, և աշակերտները հավատացին»: (Հովհ. 2. 1-12):

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝ 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»: «Ո՛վ իմ Հիսուս...», «Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Ո՛վ Մայր սիրելի, մեզ մոտ եղիր միշտ՝ մեզ օգնելու համար, որ կյանքի դժվարությունների մեջ Քո Որդու վրա դնենք մեր հույսը և լսենք Նրան:

3. ՀԻՍՈՒՍՆ ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ԳԱԼՈՒՍՏՆ Է ԱՋԴԱՐԱՐՈՒՄ՝ ԿՈՉ ԱՆԵԼՈՎ ԴԱՐՁԻ ԳԱԼ

«Հովհաննեսի բանտարկվելուց հետո, Հիսուսը Գալիլիա եկավ և Աստծո Ավետարանը քարոզելով՝ ասում էր. «Ժամա-

նակը հասել է, և մոտեցել է Աստծու Արքայությունը. ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավետարանին» (Մարկոս 1. 14-15):

Նա ներեց բոլոր նրանց մեղքերը, ովքեր խոնարհաբար հավատ ընծայելով, մոտենում էին իրեն (Մարկոս 2. 3-13, Ղուկաս 7. 47-48): Հիսուսը հայտարարեց Իր Ողորմության շնորհի մասին, որը շարունակվելու է մինչև այս աշխարհի վախճանը՝ հատկապես մեղքերի թողության խորհրդի միջոցով, ինչը Նա վերապահում է Իր Եկեղեցուն»: (Հովհ. 20. 22-23):

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Ո՛վ Մայր գթառատ, օգնի՛ր մեզ, որ Քեզ նման Որդուդ կողքին մնանք, երբ Նա Իր Ավետարանը հռչակում է մարդկանց:

4. ՀԻՍՈՒՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Լուսափայլ Խորհրդի գերագույն արտահայտությունը Պայծառակերպությունն է, որ տեղի է ունեցել Թաբոր լեռան վրա:

«Վեց օր հետո, Հիսուսն իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին և նրանց հանեց, առանձին, մի բարձր լեռ և նրանց առաջ

պայծառակերպվեց. և նրա դեմքը շողաց, ինչպես արեգակը. և նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը»: (Մատթ. 17, 1-13): *Մինչ Հիսուսի դեմքից Աստվածության փառքն էր շողարձակում, ամպից մի Ձայն է գալիս. Հայրը պատվիրում է զարմացած Առաքյալներին, որ՝ Նրան լսեն և պատրաստվեն Նրա հետ ճաշակելու մահվան Զարշարանքների տառապանքը, որպեսզի Նրա հետ էլ հասնեն Հարության բերկրանքին և Սուրբ Հոգով պայծառակերպված կյանքին:* (Ղուկաս 9. 28-36):

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջո՛ւյն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Ո՛վ Մայր, հայցի՛ր մեզ համար Քո Որդուն, որ մենք ևս Նրան փառակից լինենք Երկնային Թափորի մեջ:

5. ՀԻՍՈՒՍԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

«Եվ հաց վերցնելով՝ գոհություն հայտնեց Աստծուն, կտրեց, տվեց նրանց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ բազում մարդկանց համար է տրված. այս արե՛ք իմ հիշատակի համար»: Նույնպես և բաժակը վերցնելով, ընթրիքից հետո, ասաց. «Այս բաժակը Նոր Ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափված»:

(Ղուկաս 22. 7-21)

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝ 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փառք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Ո՛վ մարմնացյալ Աստծո Մայր, արժանի արա մեզ՝ Քեզ հետ սեղանակից լինելու հարսանեկան խնջույքին՝ երկնքի Արքայության մեջ:

Լուսափայլ խորհուրդները եզրափակել՝

«Ողջու՛յն Քեզ, Սուրբ Թագուհի», (Ողջ լե՛ր, Սուրբ Թագուհի) աղոթքով:

ՎՃՏԱԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

(Չորեքշաբթի և ուրբաթ)

1. ՀԻՍՈՒՍԻ ՏԱՌԱՊԱՆՔԸ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՊԱՐՏԵԶՈՒՄ

«Այդ ժամանակ Հիսուսը նրանց հետ եկավ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր և նրանց ասաց. «Նստեցե՛ք այստեղ, մինչև որ գնամ աղոթեմ»: Եվ իր հետ վերցնելով Պետրոսին և Զեբեդեոսի երկու որդիներին՝ սկսեց տրտմել և տագնապել: Այդ ժամանակ ասաց նրանց. «Հոգիս տխուր է մեռնելու աստիճան. այստե՛ղ մնացեք և ինձ հետ հսկեցե՛ք»: «Հա՛յր իմ, եթե անկարելի է, որ այս բաժակը ինձնից հեռու անցնի, ապա այն կխմեմ. Քո Կա՛մքը, թող լինի»:

(Մատթեոս 26. 36-46)

Խնդրում ենք իրական զղջման արցունքներ:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:

Ո՛վ իմ Հիսուս, ների՛ր մեզ մեր մեղքերը, փրկի՛ր մեզ դժոխքի կրակից: Երկինք տար բոլոր հոգիներին, հատկապես նրանց, ովքեր ամենից շատ Քո Ողորմության կարիքն ունեն: Ամեն:

(1917թ. Ֆաթիմայում երևացած Տիրամոր հանձնարարած աղոթքն է):

Հիսու՜ս, իմ միակ Սեր, ես աղոթում եմ նրանց համար, ում Դու սիրում ես, որոնք սակայն չգիտեն՝ ինչպես պետք է Քեզ սիրեն: Թող նրանք սրբագործվեն և բժշկվեն, որ իրենք էլ ազատվեն ամենայն չարից: Ամեն:

Փափագում ենք, ո՜վ Մայր, Քեզ նման կիսել Հիսուսի տառապանքները՝ մասնակցելու հոգիների փրկության համար:

2. ՀԻՍՈՒՍԻ ԽԱՐԱՁԱՆՈՒՄԸ

«Պիղատոսը հարցրեց նրանց. «Ի՞նչ չար բան է արել»: Եվ նրանք ավելի ուժգին էին աղաղակում ու ասում. «Խա՛չը հանիր դրան»: Պիղատոսը ամբոխին գոհացում տալու համար՝ արձակեց Բարաբբային և Հիսուսին խարազանել տալով՝ նրանց հանձնեց, որպեսզի խաչը հանվի»:

(Մարկոս 15. 14-15, Մատթեոս 27. 11-26, Հովհաննես 18. 28-40 և 19.1):

Խնդրում ենք մաքրություն՝ մարմնի և հոգու:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջո՛ւյն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Քո օգնությամբ, ո՛վ Մայր, ուզում ենք համբերությամբ տանել մեր ցավերն ու դժվարությունները՝ մեր մեղքերի քավության համար:

3. ՀԻՍՈՒՍԻՆ ԹԱԳԱԴՐՈՒՄ ԵՆ ՓՇԵ ՊՍԱԿՈՎ

«Այդ ժամանակ կուսակալի զինվորները Հիսուսին տարան ապարանք, և ամբողջ գունդը նրա գլխին հավաքեցին: Մերկացրին նրան և հագցրին կարմիր քղամիդ և ծիրանի ու նրան թագադրեցին փշերից հյուսված պսակով: Իսկ աջ ձեռքին մի եղեգ տվեցին ու նրա առաջ ծնկի գալով՝ ծաղրում էին ու ասում. «Ողջո՛ւյն, հրեաների թագավոր»: Եվ թքելով նրա վրա՝ եղեգն առնում էին ու խփում նրա գլխին»:

(Մատթ. 27. 27-31, Հովհ. 19. 1-12)

Խնդրում ենք համարձակություն:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել.

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջո՛ւյն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Առաջադրում ենք, ո՛վ Մայր, առանց տրտնջալու ընդունել որևէ փորձություն, որ կարող է վիրավորել մեր «ես»-ը կամ հպարտությունը:

4. ՀԻՍՈՒՄՆ ԻՐ ԽԱՉԸ ԿՐՈՒՄ Է ԴԵՊԻ ԳՈՂԳՈԹԱ

«Եվ նրանք առան Հիսուսին և տարան: Խաչափայտը նա ինքն էր վերցրել և բարձրացնում էր այն տեղը, որի անունն էր Գագաթ, իսկ եբրայեցերեն՝ Գողգոթա, որտեղ և խաչեցին նրան ու նրա հետ երկու ուրիշների՝ այս և այն կողմից, իսկ մեջտեղում՝ Հիսուսին»:

(Հովհաննես 19. 17-18)

Խնդրում ենք համբերելու առաքինություն:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Ցանկանում ենք Քեզ հետ, ո՛վ Մայր, սիրով ընդունել ու կրել մեր փոքր կամ մեծ խաչերը, երբ և ինչպես, որ ներկայանան մեզ:

5. ՀԻՍՈՒՍԸ ԽԱՉՎՈՒՄ Է ԵՎ ԽԱՉԻ ՎՐԱ ՄԵՌՆՈՒՄ

«Հիսուսը գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, և որպեսզի Գրվածը կատարվի, ասաց՝ ծարավ եմ: Եվ այնտեղ քացախով լի մի ման կար. զինվորները լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա բերանին: Հիսուս ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը կախելով՝ հոգին ավանդեց»:

(Հովհաննես 19. 23-30)

Խնդրում ենք Սրբության մեջ հարատևելու շնորհքը:

Վարդարանի առանձին հատիկի հետ.

1 «Հայր մեր...», 10 «Ողջո՛ւյն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Մենք էլ, ո՛վ Մայր, Քեզ միացած, ուզում ենք նվիրել հոգի և մարմին՝ հոգիների փրկության համար:

Եզրափակել. «Ողջո՛ւյն Քեզ, Սուրբ Թագուհի» (Ողջ լե՛ր, Սուրբ Թագուհի):

ՓԱՌԱՎՈՐՅԱԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

(Երեքշաբթի և կիրակի)

1. ՀԻՍՈՒՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Երբ շաբաթն անցավ, Մարիամ Մագ-դաղենացին, Հակոբոսի մայր Մարիամը և Սողոմեն կիրակի օրը վաղ առավոտյան՝ արևածագին, գնացին գերեզման: Ներս մտնելով՝ տեսան սպիտակ պատմուճան հագած մի երիտասարդի, որ նստած էր աջ կողմում և սաստիկ վախեցան: Եվ նա ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, դուք Հիսուսի՞ն եք փնտրում, խաչված Նա-զովրեցուն. Նա հարություն առավ, այս-տեղ չէ: Ահավասիկ այն տեղը, ուր նրան դրել էին»: (Մարկ. 16. 1-18; Հովհ. 20):

Խնդրում ենք աննկուն հավատքի առա-քինություն:

Առանձին հատիկի հետ աղոթել.

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:

«Ո՛վ իմ Հիսուս, ների՛ր մեզ մեր մեղքերը, փրկի՛ր մեզ դժոխքի կրակից: Երկինք տար բոլոր հոգիներին, հատ-կապես նրանց, ովքեր ամենից շատ Քո Ողորմության կարիքն ունեն: Ամեն»:

«Հիսու՛ս, իմ միակ Սեր, ես աղոթում եմ նրանց համար, ում Դու սիրում ես, որոնք սակայն չգիտեն՝ ինչպես պետք է Քեզ սիրեն: Թող նրանք սրբագործվեն և բժշկվեն, որ իրենք էլ ազատվեն ամենայն չարից: Ամեն»:

Օգնի՛ր մեզ, ո՛վ Մայր Փրկչի, որ քաջությամբ դիմագրավենք ամեն փորձություն և արգելք և Իր միջոցով հաղթենք մեղքին ու մահվանը:

2. ՀԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

«Հիսուս առաքյալներին տարավ մինչև Բեթանիա ու ձեռքերը բարձրացնելով՝ օրհնեց նրանց: Եվ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից և դեպի երկինք էր վերանում: Իսկ նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ: Եվ միշտ տաճարում էին, գովաբանում և օրհնաբանում էին Աստծուն»:

(Ղուկաս 24. 44-53):

Խնդրում ենք աննկուն հույսի առաքինություն:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջո՛ւյն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Աղոթի՛ր մեզ համար, ո՛վ Մայր, որ առաքյալների նման մենք էլ Քրիստոսի վկաները լինենք աշխարհի դիմաց:

3. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԻՋՆԵԼԸ՝ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ *(ՊԵՆՏԵԿՈՍՏԵ)*

«Երբ Պենտեկոստեի օրերն անցել էին, բոլորը միասիրտ, մեկ տեղում էին հավաքվել: Հանկարծ երկնքից հնչեց մի ձայն՝ նման սաստիկ հողմից եկած ձայնի և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ՝ նման կրակի բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել տարբեր լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս»: (Գործք. 2. 1 - 41):

Խնդրում ենք աննկուն սիրո առաքինություն:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել.

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջո՛ւյն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Աղոթի՛ր մեզ համար, ո՛վ Մայր, որ Սուրբ Հոգին տևապես հաղորդի մեզ ճշմարտության լույսը և Սիրո կրակը:

4. ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

«Արդ, մի խորհուրդ եմ հայտնում ձեզ. բոլորս չէ, որ պիտի ննջենք, բայց բոլորս պիտի նորոգվենք» (Ա Կորնթ. 15:51-57):

«Քրիստոս հարություն առավ, նա առաջին պտուղն է ննջեցյալների: Քանզի մի մարդու պատճառով մահ եղավ և մի մարդու միջոցով էլ՝ մեռելների հարություն: Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան, սակայն յուրաքանչյուրը իր հերթին, նախ Քրիստոս, իբրև առաջին պտուղը, և հետո քրիստոնյաները՝ նրա գալստյանը»:

(Ա Կորնթ. 15, 20-23)

Աստվածածնի Վերափոխումը, այսինքն մարմնով և հոգով երկինք փոխադրվելը, Տիրամոր պսակումն է՝ որպես Աստծո Մայր և միշտ Կույս: Մարիամը, որ ի տես Աստծո Որդու ծնող լինելուն զերծ էր մնացել սկզբնական մեղքից, ազատվում է մեղքի պատժից՝ մահվանից, և Իր Որդու՝ Քրիստոսի փրկագործության մեծագույն պարգևի առաջին ստացողն է լինում: (Հմմ. Հայտնություն 12.1)

Խնդրում ենք Աստվածամորը անվերապահորեն սիրելու և նվիրաբերվելու Շնորհը:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»,

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Սովորեցրու՛ մեզ, ո՛վ Մայր, Աստծուն ուղղել մեր բոլոր իղձերն ու մտածումները, որպեսզի Քեզ հետ, կատարելապես միանանք մի օր Աստծո հետ:

5. ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԹԱԳԱԴՐՈՒՄԸ ԵՐԿՆՔՈՒՄ

«Եվ երկնքում մեծ նշան երևաց մի կին՝ արեգակն իր վրա առած, լուսինն իր ոտքերի տակ և իր գլխի վրա մի պսակ՝ տասներկու աստղերից: Նա հղի էր ու ճչում էր երկունքի մեջ և վշտերի մեջ մոտ էր ծնելու: Եվ երկնքում երևաց մի այլ նշան էլ. հրակարմիր մի մեծ վիշապ, որ ուներ 7 գլուխ և 10 եղջյուր. նրա գլուխների վրա կային 7 խույրեր: Եվ նրա պոչը քաշում տանում էր երկնքի աստղերի մեկ երրորդ մասը. ու դրանք գցեց երկրի վրա: Վիշապը կանգնած էր այն ծննդաբերող կնոջ առաջ, որպեսզի, երբ կինն իր որդուն ծնի, կուլ տա նրան: Եվ կինը ծնեց արու զավակ, որ իշխելու էր բոլոր ազգերի վրա երկաթե գավազանով: Եվ վիշապը զայրացավ կնոջ դեմ ու գնաց պատերազմելու նրա մյուս զավակների, որոնք պահում էին Աստծու պատվիրանները և վկայում էին Հիսուսին». (Հայտ. 12. 1-17):

Խնդրում ենք հավերժական երջանկության արժանանալ Երկնային Արքայության մեջ:

Վարդարանի առանձին հատիկի հետ աղոթել՝

1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:

«Ո՛վ իմ Հիսուս...»,

«Հիսու՛ս, իմ միակ Սեր...»:

Միջնորդի՛ր մեզ համար, ո՛վ Մայր, որ մենք էլ մի օր երկնքի մեջ, Քեզ հետ վայելենք Աստծո փառքը և երջանկու-թյունը:

Փառավորյալ խորհուրդները եզրա-փակել.

«Ողջ լե՛ր, Սուրբ Թագուհի» (*Ողջու՛յն Քեզ, Սուրբ Թագուհի*) *աղոթքով:*

Վարդարանը եզրափակել այս աղոթքով.

ՈՂՋՈՒ՛ՅՆ ՔԵԶ, ՍՈՒՐԲ ԹԱԳՈՒՀԻ

(«Salve Regina»-ն գրվել է Խաչակիրների կողմից՝ 11-րդ դարում և որպես երգ՝ բոլորը երգել են թշնամու դեմ պատերազմի գնալուց առաջ՝ 1096թ.)

Ողջու՛յն Քեզ, Սուրբ Թագուհի,

Մա՛յր Ողորմության, Կյանք մեր, քաղցրություն մեր և հույս մեր:

Քեզ ենք աղաղակում արտաքսված

խեղճ զավակներս Եվայի,

Դեպի Քեզ ենք բարձրացնում մեր հառաչանքները՝

Հեծելով և ողբալով արցունքների այս հովտից,

Արդ, ո՛վ Բարեխոս մեր, մեզ դարձրու ողորմության Քո աչքերը, և այս աքսորից հետո ցույց տուր մեզ Քո որովայնի օրհնյալ պտուղ՝ Հիսուսին:

Ո՛վ Գթած, ո՛վ Բարեգութ, ո՛վ Քաղցր Կույս Մարիամ,

Աղոթի՛ր մեզ համար, Սուրբ Աստվածածին, որ արժանի լինենք Քրիստոսի խոստումներին: Ամեն:

ՈՂՋ ԼԵՐ, ՍՈՒՐԲ ԹԱԳՈՒՀԻ

Ո՛ղջ լեր, Սուրբ Թադուհի՛, Մա՛յր ողորմութեան.

Կեանք, քաղցրութիւն եւ յոյս մեր, ո՛ղջ լեր:

Առ քեզ գոչեմք աքսորեալ որդիքս Եւայի:

Առ քեզ հառաչեմք՝ հեծելով եւ ողբալով յայսմ արտասուաց վայրի:

Արդ, ո՛վ Բարեխօս մեր, դարձո՛ առ մեզ զաչս ողորմութեան քո:

Եւ զՅիսուս, զօրհնեալ պտուղ որովայնի քո,

յետ այսր աքսորանաց ցոյց մեզ, ո՛վ Գթած, ո՛վ Բարեգութ, ո՛վ քաղցր Կոյս Մարիամ:

Աղաչեա՛ վասն մեր, Սուրբ Աստվածածին,

Զի արժանի լիցուք խոստմանց Քրիստոսի: Ամեն:

ՏԻՐԱՄՈՐԸ ՆՎԻՐՎԱԾ ԳՈՎԵՐԳ

Լիթանիա (Litania)

ՊԱՂԱՏԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ

Տե՛ր, ողորմեա՛,
Քրիստո՛ս, ողորմեա՛:
Քրիստո՛ս, լուր մեզ,
Քրիստո՛ս, անսա՛ մեզ:
Հա՛յր երկնաւոր Աստուած,
    ողորմեա՛ մեզ:
Որդիդ Փրկիչ աշխարհի Աստուած,
    ողորմեա՛ մեզ:
Հոգիդ Սուրբ Աստված,
    ողորմեա՛ մեզ:
Սուրբ Երրորդութիւն՝ մի Աստված,
    ողորմեա՛ մեզ:
Սրբուհի Մարիամ,
Սուրբ Աստուածածին,
Սուրբ Կոյս կուսանաց,
    աղաչեա՛ վասն մեր:
Մայր Քրիստոսի,
Մայր Աստուածային շնորհաց,
Մայր մաքուր,
    աղաչեա՛ վասն մեր:

Մայր սուրբ,
Մայր անարատ,
Մայր անբիծ,
աղաչեա՛ վասն մեր։
Մայր սիրելի,
Մայր սքանչելի,
Մայր բարի խորհրդի,
աղաչեա՛ վասն մեր։
Մայր Արարչին,
Մայր Փրկչին,
աղաչեա՛ վասն մեր։
Կոյս հարգարժան,
Կոյս քարոզելի,
Կոյս հզոր,
աղաչեա՛ վասն մեր։
Կոյս գթած,
Կոյս հաւատարիմ,
Հայելի արդարութեան,
աղաչեա՛ վասն մեր։
Աթոռ իմաստութեան,
Պատճառ մեր խնդութեան,
Անօթ հոգեւորական,
աղաչեա՛ վասն մեր։
Անօթ պատուելի,

Անօթ ընտիր աստուածպաշտութեան,
Վարդ խորհրդական,
աղաչեա՛ վասն մեր:
Աշտարակ Դաւթեան,
Աշտարակ փղոսկրեայ,
Տուն ոսկեղէն,
աղաչեա՛ վասն մեր:
Տապանակ Ուխտի,
Դուռն երկնից,
Աստղ առաւօտեան,
աղաչեա՛ վասն մեր:
Առողջութիւն հիւանդաց,
Ապաստան մեղաւորաց,
Մխիթարիչ վշտացելոց,
աղաչեա՛ վասն մեր:
Օգնական քրիստոնէից,
Թագուհի հրեշտակաց,
Թագուհի նահապետաց,
աղաչեա՛ վասն մեր:
Թագուհի մարգարէից,
Թագուհի առաքելոց,
Թագուհի մարտիրոսաց,
աղաչեա՛ վասն մեր:
Թագուհի խոստովանողաց,

Թագուհի կուսանաց,
Թագուհի ամենայն սրբոց,
աղաչեա՛ վասն մեր։
Թագուհի Անարատ Յղացեալ,
Թագուհի փոխեալ յերկինս,
Թագուհի Սուրբ Վարդարանի,
աղաչեա՛ վասն մեր։
Թագուհի տիեզերաց,
Թագուհի Հայաստանի,
Թագուհի խաղաղութեան,
աղաչեա՛ վասն մեր։
Գա՛ռն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի,
խնայեա՛ ի մեզ, Տէ՛ր։
Գա՛ռն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի,
անսա՛ մեզ, Տէ՛ր։
Գա՛ռն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի,
ողորմեա՛ մեզ, Տե՛ր։
Յիսու՛ս, լու՛ր մեզ,
Քրիստո՛ս, անսա՛ մեզ։
Ամէն։

ԱՂՈԹՔ ԱՌ ՀԱՅՐ

Ո՛վ Աստված, Քո Միածին Որդին Իր կյանքով, մահով ու հարությամբ մեզ համար հոգաց հավիտենական փրկության բարիքները: Ամենօրհնեալ Մարիամ Կույսի սուրբ Վարդարանի միջոցով խորհեցինք Տերունական Խորհուրդների մասին. ընդունի՛ր դրանք մեզ համար, որ նմանվենք այդ Պատգամներին և ընդունենք, ինչ որ խոստանում են Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով: Ամեն:

ԱՂՈԹՔ ՎԱՐԴԱՐԱՆԻ

Ո՛վ սուրբ Վարդարան՝ Օրհնյալ Մարիամ Կույսի,

Քաղցր մի շղթա ես, որ մեզ առաջնորդում է դեպի Աստված,

Սիրո շաղկա՛պ, որ մեզ միացնում է հրեշտակներին,

Փրկության աշտարակդ՝ Դժոխքն ասպատակող,

Ապահով նավահանգիստ՝ հասարակաց նավաբեկությունից հետո,

Քեզանից երբե՛ք չպիտի բաժանվենք,
Դու պիտի լինես սփոփանք հոգե-
վարքի ժամին,
Քեզ մոտ է մարող կյանքի վերջին
համբույրը:
Վերջին խոսքը մեր շրթունքներին,
Պիտի լինի Քո քաղցր անունը,
Ո՛վ Վարդարանի օրհնյալ Թագուհի,
Ո՛վ մեր սիրելի Մայր,
Ո՛վ ապաստան մեղավորների,
Ո՛վ գերագույն մխիթարիչ սգա-
վորների.
Միշտ օրհնյալ լինես, այսո՛ր և մի՛շտ,
Երկրի վրա և երկնքի մեջ:
Ամեն:

ՇԱՐԱԿԱՆ՝ ՈՒՐԱԽ ԼԵՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
(Սբ. Ներսես Շնորհալի)

1. Ուրախ լեր Աստուածածին, յոյս եւ փրկութեան Մայր.
ըզքեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք:
2. Ըզքեզ լուսոյ Մայր և Կոյս, ըզքեզ դանձդ կենաց
աստուածային. ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք:
3. Մա՛յր սուրբ, անարատ լուսոյն. հրեշտակային օրհնութեամբ
պատուեալ ըզքեզ մեծացուցանեմք:

ՆԵՐԲՈՂ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ
(Սբ. Գրիգոր Նարեկացի)

Զ. Խնդա՛ եւ ուրախացի՛ր, Քեզնից ծնուած անեղ Աստուծոյ անճառելի Յա՛րկ, որ Քո խնամած Որդուդ հրաշաշարդ փառքով լուսակերպ համբարձուեցիր վերնային երկնի ծայրակատարը,

եւ Հոգու թեթեւագոյն թեւով սլանալով՝ աննիւթական կայանները վերաչուեցիր մնալու: Ուստի եւ իշխանական իմացութեանն անհասանելի եւ սրտի զգայութեանց համար անընկալելի, անտեսանելի վայելքները անձամբ հոգիագրկեալ՝ Անեղծի փառքի ճոխութիւնները սեփականեցիր, Սուրբ Աստուածածին: Ամէն:

ԲԱՆ ԻԶ

(Մատյան Ողբերգության)

40. Այժմվանից, նույնիսկ, երբեմն եմ հիշում ես Դատաստանի,

Անլույս մռայլը չարատես աչքիս առջև կփռվի.

Անօգ, կապկապյալ եղկելիս մատնվել եմ տարակույսի.

Երևում է ինձ պատկերը երկյուղ ազդող վերնայնի:

Տարտարոսի մեջ անարև սաստիկ և անծածկելի,

45. Գեհենի հրում մորմոքվում է հույժ

անձն իմ եղկելի,

Անհայտ ու անհետ կորած-կործանված անդնդում մեղքի:

Ահա ունեցածս արծաթն անպիտան, որ արժեք չունի,

Որ չի ընդունվի տերունի գանձում և չի ամբարվի:

Հայացքս է պղտոր, և ձեռքս անմաքուր, աննվիրելի.

50. Բայց ես սրտաբեկ, մատներս շարժելով, հուսալով դարձի,

Երեսս հողին՝ պաղատու՛մ եմ Քեզ, Դու Մա՛յր Հիսուսի.

Բարեխոս եղի՛ր ինձ՝ մեղավորիս, երկնի՛ց Իսկուհի.

Մաղթի՛ր քավություն ինձ, ո՛վ զորավոր փրկանակ կյանքի,

Թո՛ղ երկրի վրա միշտ օրհնություններ, բուրումներ խունկի,

Եվ անուշահոտ յուղեր մատուցվեն Քեզ ախորժելի:

Ամեն:

ԱՂՈԹՔ՝ ԹԱԳՈՒՀԻ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻ

Թագուհի Ամենասուրբ Վարդարանի, աշխարհի պատմության այս ողբերգական պահին մենք Քո Անարատ Սրտին՝ մեր ապավենին, մեր հույսին, փրկությանն ենք հանձնում և վստահում մեզ: Խղճա՛ այս աշխարհը, հոշոտված ահավոր ներհակություններով, որ վառվում է ատելության հրով, ինքն իր մեղքերի զոհը:

Թո՛ղ Քո Սիրտը շարժի՝ այսքան ավեր, ցավ և վիշտ տեսնելիս:

Քո մայրական Սրտին ենք հանձնում մեր անձերը, մեր ընտանիքները, մեր երկրներն ու ողջ մարդկությանը: Պահպանի՛ր և փրկի՛ր մեզ:

Ո՛վ Սիրտ Մարիամի, աղբյուր Անարատ Սիրո, լցրու՛ մեր անձնասեր սրտերը երկնային ողորմությամբ և եղբայրական իսկական սիրով, առանց որի չի կարող խաղաղություն լինել:

Շնորհի՛ր, որ մարդիկ և ժողովուրդ-

ները հասկանան և կատարեն Քո Որդու «ՍԻՐԵՑԵ՛Ք ՄԻՄՅԱՆՑ» Պատվիրանը, որպեսզի այդ իսկական խաղաղությունը խորապես հաստատվի Քրիստոսի Ճշմարտության և իրականության մեջ: Ամէն:

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄՈՐԸ

Հիշի՛ր ինձ (կարող եք նշել ձեր խնդրանքը կամ անուն), ո՛վ Ամենագութ Կույս Մարիամ. դեռ չի եղել դեպք, որ պաշտպանությանը Քո դիմեն, օգնություն Քեզնից հայցեն կամ բարեխոսությունը Քո խնդրեն և մնան անպատասխան:

Այս վստահությամբ համակված՝ դեպի Քեզ եմ գալիս, ո՛վ կույսերի Կույս, ո՛վ իմ Մայր, մեղավոր և վշտահար դեպի Քեզ եմ գալիս ու կանգնում Քո առջև:

Ո՛վ Մայրդ Խոսքի Մարմնացյալ, անտես մի՛ արա թախանձանքն իմ, այլ ողորմությամբդ լսիր և պատասխան տուր ինձ: Ամեն:

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ

Քո առջև ենք ընկնում,
Սու՛րբ Աստվածածին
և աղաչում Անարատ Կույսիդ՝
Բարեխոսի՛ր մեր անձերի համար
և աղաչիր Միածին Որդուդ՝
Փրկել մեզ փորձություններից,
Հոգու և մարմնի բոլոր վտանգներից:
Ամեն:

ՇԱՐԱԿԱՆ

Դու՛, որ Հրեշտակի ձայնը լսելիս հիացմունքով բերկրեցար, բարեխոսի՛ր մեզ համար, օրհնաբանում ենք Քեզ, որ կանանց մեջ Օրհնյալն ես:

Որ Հուրն Աստված կրեցիր Քո որովայնում, անկեզ մորենի, բարեխոսի՛ր մեզ համար, օրհնաբանում ենք Քեզ, որ կանանց մեջ Օրհնյալն ես:

Որ էակներից Անշոշափելիին Քո գըրկում պահելով՝ կաթով, դիեցրիր, բարեխոսի՛ր մեզ համար, օրհնաբանում ենք Քեզ, որ կանանց մեջ Օրհնյալն ես:Ամէն:

ՄԱՅՐ ԵՎ ԿՈՅՍ

Մայր և Կոյս, Աղախին Քրիստոսի,
Որ բարեխօսդ ես միշտ աշխարհի,
Քեզ երանեն ամենայն ազինք։
Մաքուր աղաւնի և Հարսն
երկնից, Մարիա՛մ,
Տաճար և Աթոռ Աստուծոյ Բանին,
Քեզ երանեն ամենայն ազինք։
Քեւ հաճեցան իմանալիքն
ընդ հողեղէնքս,
Եւ քեւ մերձեցաք ի վայտն կենաց,
Քեզ երանեն ամենայն ազինք։

ՈՒ՞Ր ԵՍ, ՄԱՅՐ ԻՄ

(Խավարման գիշերոյ)

1. Ու՞ր ես, Մայր իմ, քաղցր եւ անուշ,
   Սէր ծընողիդ զիս այրէ։
2. Լըցան աչք իմ դառն արտասուօք,
3. Ազդ արարէք Մօրն իմոյ,
   Որ գայ կարօտն իւր առնէ։
4. Գուցէ երբեք յետոյ եկեալ,
   Եւ զիս մեռեալ գտանէ։

5. Թըքին, հարին, ապտակեցին,
Պըսակ եդին ի փշէ:
6. Ի փայտ խաչին բեւեռեցին,
Ներկեալ փշէ յարենէ:
7. Ջուր խնդրեցի, քացախ արբի,
Ցանօրինաց ձեռանէ:
8. Վա՛յ ինձ Հիսուս՝ Միածին Որդին,
Արեգակը կորուսի:
9. Ու՞ր ես աչացս լոյս իմ Որդեակ,
Հոգւոյս հոգի իմ Զաւակ:
10. Ա՛յ իմ սիրուն անուշ գառնուկ,
11. Ես առանց քեզ մնացի որբուկ:

ԽՆԿԻ ԾԱՌԻՆ ՆՄԱՆ ԵՍ

(Տաղ Վերափոխման)

1. Խընկի ծառին նման ես,
Պըտուղ դու քաղցրահամ ես,
զԲարի պըտուղ բերեալ ես,
Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ:
2. Դու հողանիւթ սրովբէ ես,
Հարսն ի յերկրէ յերկինս ես,
զԱստուած մարմնով ծընեալ ես,
Աստուածածի՛ն, մեղա՛ քեզ:

3. Դու յորդառատ աղբիւր ես,
Ծարաւելոց արբումն ես,
Մեղաւորաց քաւիչ ես,
Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ:
4. Դու լուսեղէն տաճար ես,
Ոսկիապատ խորան ես,
Դու մարգարիտ անգին ես,
Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ:

ՏԻՐԱՄՈՐ ԳՈՎՔ

(Ժողովրդական երգ)

Քեզ հավատամ, խոստովանիմ,
Անմահական սուրբ Տիրամեր,
Քու տաճարին էրկրպագիմ,
Շատ պատվական սուրբ Տիրամեր:
Գովամ քումպեթ բանձրը սարեն,
Լուս կը բխա մարմար քարեն,
Էն է մըզի փրկի չարէն,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր:
Գովամ զքու օսկի խաչեր,
Քու դուռ գիկան մատաղ խոչեր,
Ըխտավորներ՝ ճերմակ մանչեր,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր:
Գովամ զքու նախշուն յոդեն,
Ջըմ հեռանա ես քու մոդեն,

Զըմ կշտանա անուշ հոդէն
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր:
Խոյլի Վարդան գովաց քըզի,
Դու՛ էր շընորհք տվի մըզի,
Թըղ պահապան էղնի ճըզի՝
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր:

ՀԱՄԱՅՆ ԱԶԳԵՐԻ ՏԻՐԱՄՈՐ ԱՂՈԹՔԸ

(Սուրբ Տիրամայրն այս աղոթքը տվել է 1951թ.՝ աշխարհի դարձի և փրկության համար)

Տեր Հիսուս Քրիստոս, Հոր Որդի,
Ուղարկի՛ր այժմ Քո Հոգին աշխարհի վրա.
Թո՛ղ Սուրբ Հոգին բնակվի համայն ազգերի սրտերում,
Որպեսզի նրանք պաշտպանվեն այլասերումից,
Աղետից և պա-

տերազմից:
Թող Համայն Ազգերի Տիրամայրը,
Որ մի ժամանակ Մարիամ էր,
Լինի մեզ փաստաբան: Ամեն:

ՓԱՌԱՎՈՐԵԱԼ ՏԵՐ

(«Հավատով խոստովանիմ».
Սբ. Ներսես Շնորհալի)

24. Փառավորեալ Տեր, ընդունի՛ր ծառայիդ աղաչանքները եւ ի բարին կատարիր իմ խնդրանքները՝ բարեխոսութեամբ սրբուհի Աստվածածնի եւ Հովհաննես Մկրտչի, եւ սուրբ Ստեփանոս Նախավկայի, եւ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի, եւ սուրբ առաքեալների, եվ մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնաւորների, կույսերի, միանձնեաց եւ Քո բոլոր երկնային եւ երկրային սրբերի: Եւ Քեզ՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, փա՛ռք եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄԱՅՐ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

(Խոսք. և երաժշտ.՝ Յ. Տէր Պետրոսեանի)

Մա՛յր Ողորմութեան, Սու՛րբ Աստուածածին,
Պաշտպան հայութեան, ու՛ր ալ գտնուին:
Որքա՛ն օգնեցիր կերտելու սուրբեր,
Դու Մա՛յր կարեկիր, համակ գութ
ու սեր:
Թող մեզ չտանջեն տենչեր մոլորուն,
Հսկէ՛ մեզ վրա փորձանքի պահուն:

Կրկներգ. ~

Բռնի ուժի տակ
Քեզ գաղտ սիրեցին,
Սէրը անապակ
Լոյս տեսաւ կրկին:
Սէրը անապակ
Լոյս տեսաւ կրկին:
Աշխարհի պահակ
Սուրբ Աստուածածին,
Մնանք շուքի տակ
Սուրբ Լուսաւորչին:
Մնանք շուքի տակ

Սուրբ Լուսաւորչին:
Միջնանվագ...
Կրկներգ ՝
Եւ օրը վերջին,
Երբ մոմը մարի,
Նոր աշխարհի մէջ
Մեզ արեւ ծագի:
Նոր աշխարհի մէջ
Մեզ արեւ ծագի:

Վերջ առաջին մասի

Երկրորդ մասում՝ հաջորդ գրքույկում, կներկայացվեն հավելյալ հինգ Վարդարանները՝ «ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՎԱՐԴԱՐԱՆԸ», «ՅՈԹ ՎԵՐՔԵՐԻ ՎԱՐԴԱՐԱՆԸ», «ՀԻՍՈՒՍԻ ՎԱՐԴԱՐԱՆԸ», «ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱՐԱՆԸ» և «ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՎԱՐԴԱՐԱՆԸ», *ինչպես նաև* ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄՈՐ ԵՐԵՎՈՒՄՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

Հրատարակվում է մեկենասությամբ մի խումբ Աստվածասեր անձանց, որոնց Տիրոջից մեծ վարձք է սպասվում թե՛ երկրի վրա և թե՛ երկնքում:

Աշխատասիրությամբ՝
Սոֆի Հակոբյանի,
Էջադրող - սրբագրիչ՝
Մեհրուժան Բաբաջանյանի:

Այս վարդարանը աղոթելիս՝ խնդրում ենք հիշել նաև վերը նշված անձանց և աղոթել նրանց ննջեցյալների հոգիների փրկության համար:

Տպագրված է. «ՄՀՄ ԳՐԱՏՈՒՆ»
ՍՊԸ տպագրատանը:
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0064, Հ.Ա. Բ-1 թաղամաս, Բաֆֆու 84/բ, Հեռ/ֆակս (+374 10) 72 00 83)

Էլեկտրոնային հասցե.
sofihakobyan00rambler.ru@rambler.ru